ՀՐԱՎԵՐ
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
"Տեխնիկական աջակցություն", RACP/TA/QCBS-2015/079

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ" ԾՐԱԳԻՐ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ *ՈՐԱԿԻ ԵՎ ԳՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ*
ԴԱՆԻԴԱ Դրամաշնորհ - DK 817-AM

Սույն "Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր"-ը հետևում է սույն ծրագրի համար Ընդհանուր գնումների ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business**UN331** թիվ **802**, 24 Հունիսի, 2011թ-ին:

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ դրամաշնորհ է ստացել Դանիայի թագավորության Միջազգային զարգացման գործակալությունից /այսուհետ՝ ԴԱՆԻԴԱ/ աջակցելու "Գյուղական Կարողությունների ստեղծում" ծրագրի /այսուհետ՝ ԳԿՍԾ/ թիրախային ազգաբնակչությանը և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

**Խորհրդատուի ընտրության նպատակն է՝** Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի «Գյուղական ֆինանսավորում (այգեգործական վարկեր)» բաղադրիչի շրջանակներում վարկավորման համար մասնակից ֆինանսական կառույցներին դիմած ֆերմերներին (ֆիզիկական և իրավաբանական անձանց) անվճար տեխնիկական աջակցության տրամադրումն է:

**Ծառայությունները՝** Առաջադրանքը բաղկացած է հետևյալից.

q **Ա. Գրքույկների և բուկլետների մշակում**: Խորհրդատուն պետք է Պատվիրատուի կողմից ներկայացված նյութերի հիման վրա պատրաստի, տպագրի և տարածի համապատասխան տեխնիկական ուղեցույցներ պարունակող գրքույկներ, ինչպես նաև Բաղադրիչի վարկային պրոդուկտի վերաբերյալ բուկլետներ;

q **Բ. Տեխնիկական խորհրդատվություն և դաշտային այցելությունների իրականացում**: Ակնկալվում է, որ Խորհրդատուն պետք է աշխատի մոտ 700 մարդ-օր, տրամադրելով անմիջական տեխնիկական խորհրդատվություն ֆերմերներին, որոնք ստացել են կամ մտադիր են ստանալ վարկեր այգիներ հիմնելու նպատակով: Նմանատիպ տեխնիկական խորհրդատվությունը կարող է տրամադրվել կամ դաշտում, կամ՝ գրասենյակից, որի նպատակը կլինի օգնել ֆերմերին՝ որոշելու, արդյո՞ք վերցնել վարկ այգի հիմնելու նպատակով, և արդյունավետ կերպով հիմնելու այգիներ:

q **Գ. Դաշտային այցելություններ**: Խորհրդատուն պետք է տրամադրի անմիջական տեխնիկական խորհրդատվություն ֆերմերներին, որոնք ստացել են կամ մտադիր են ստանալ վարկեր այգիներ հիմնելու նպատակով: Նոր տնկված այգիների համար կպահանջվի մոտ 15-18 այցելություն մեկ տարվա ընթացքում, մինչդեռ արդեն իսկ տնկված այգիների համար կբավականացնի 5-6 այցելություն: Ի հավելվումն, կպահանջվի 2-3 այցելություն այն ֆերմերների համար, որոնք պատրաստվում են ստանալ վարկեր: Դաշտային այցելության ընթացքում խորհրդատուի կողմից պետք է դիտարկվեն առաջարկված ներդրումների և տեխնոլոգիաների կիրառումը:

Ծրագիրը իրականացնելու համար խորհրդատուի ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով ԾԻԳ-ը բոլոր շահագրգիռ և որակավորված կազմակերպություններին հրավիրում է ներկայացնել Հետաքրքրության հայտեր:

Հետաքրքրության հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

*Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;*
*Պետական գրանցման վկայականի պատճենը;*
*Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;*
*Վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ խորհրդատվական ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառյալ ծրագրի և պատվիրատուների անվանումները, պայմանագրային արժեքները, իրականացման տարեթվերը, բավարար ապացույցներ իրականացված խորհրդատվական աշխատանքների, մշակումների, ծրագրերի մասին, և այլն:*
*Հետաքրքրության հայտը համատեղ ներկայացնելու դեպքում ՀՁԳ պայմանագրի պատճենը;*
*Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV):*

Կարճ ցանկի կազմման չափորոշիչներն են՝

- Վերջին հինգ տարիների ընթացում նմանատիպ խորհրդատվական առաջադրանքների իրականացման
միջազգային փորձ – 50 միավոր
- Վերջին հինգ տարիների ընթացում նմանատիպ խորհրդատվական առաջադրանքների իրականացման
փորձ Հայաստանում – 50 միավոր

Հետաքրքրության հայտը ներկայացվում է անգլերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն: Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ 12 ամիս: Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010 սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2015թ. դեկտեմբերի 11-ը, ժ. 18.00:

*ՀՀ ԿԱ "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ*
*Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան*
*Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ;*
*Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 -10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -58; e-mail: procurement@raed.am*